ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
««ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ԳՈՎԱԶԴԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄԱՍԻՆ

1. ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

««Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունումը պայմանավորված է լեզվի բնագավառում օրենսդրական բացերը վերացնելու, օրենքի միատեսակ կիրառումը, իրավական որոշակիության սկզբունքը, Հայաստանի Հանրապետության պետական լեզվի՝ հայերենի գործառությունը բոլոր ոլորտներում ապահովելու անհրաժեշտությամբ:

Ըստ ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի *(նախկին խմբագրությամբ՝ 12-րդ հոդված)*՝ «Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է»*:*

Հայաստանի Հանրապետության պետական լեզվաքաղաքականության հիմնական դրույթները սահմանվում, լեզվավիճակը, պետական իշխանության և կառավարման մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների լեզվահարաբերությունները կարգավորվում են «Լեզվի մասին» ՀՀ օրենքով:

Ըստ «Լեզվի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի՝ «Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է, որը սպասարկում է հանրապետության կյանքի

բոլոր ոլորտները: Հայաստանի Հանրապետության պաշտոնական լեզուն գրական հայերենն է»:

Նախագծով առաջարկվող փոփոխությունների հիմնական մասը վերաբերում է «Լեզվի մասին» ՀՀ օրենքում առկա բացերին. առաջարկվում է խմբագրել «պետական լեզվաքաղաքականություն», «գործավարություն» և «ցուցանակ» հասկացությունները, ինչպես նաև օրենքը լրացնել «լեզվավիճակի ուսումնասիրություն», «լեզվավիճակի մշտադիտարկում», «պետական լեզվական վերահսկողություն», «լեզվական փորձաքննություն», «փաստաթուղթ», «ձևաթուղթ», «զուգակցել օտար լեզվով» նոր հասկացություններով: Նշված հասկացությունների որոշակիացումը և նոր հասկացությունների սահմանումը հնարավորություն կտա առավել արդյունավետ դարձնել լեզվի բնագավառում իրականացվող պետական վերահսկողությունը:

Նախագծով առաջարկվող փոփոխությունների թվում է նաև հրապարակային գրվածքների (գովազդ, ցուցանակ, ծանուցման բնույթի այլ հրապարակային գրվածք) լեզվական ձևավորման պահանջների նախատեսումը, ինչպես նաև դրանց լեզվական ձևավորման կարգը: Նշված կարգավորումները թույլ կտան որոշակիացնել այն լեզվական պահանջները, որոնք անհրաժեշտ է պահպանել հրապարակային գրվածքների (ցուցանակ, գովազդ, ծանուցման բնույթի այլ հրապարակային գրվածք) ձևավորման ժամանակ: Օրենքի միատեսակ կիրառությունը, իրավական որոշակիության սկզբունքն ապահովելուն, օրենսդրական բացը վերացնելուն են միտված նաև հարակից՝ «Գովազդի մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքներում և Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններն ու լրացումները:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին պարբերության նոր խմբագրությունը միտված է լեզվաքաղաքականության բնագավառում միջոցառումներ իրականացնող մարմինների ու մեխանիզմների հստակեցմանը:

2. ԸՆԹԱՑԻԿ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. ՀՀ լեզվի կոմիտեի նախապատրաստած նյութերով վարչական իրավախախտման վերաբերյալ գործերի քննությունը կատարում է վարչական դատարանը՝ Լեզվի կոմիտեի հայցադիմումի հիման վրա *(Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգիրք, 223-րդ, 254-րդ, 189^{2}-189^{6}-րդ հոդվածներ, ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք, 3-րդ հոդված, 2-րդ մաս, 1-ին կետ):*

Իրավունքի գերակայության հիմնարար սկզբունքներից է իրավական որոշակիությունը, որը պահանջում է, որ դատարանի՝ որևէ հարցի կապակցությամբ կայացրած վերջնական դատական ակտը կասկած չհարուցի: Դատարանի հիմնավորված և պատճառաբանված որոշում կայացնելու հիմնաքարը օրենքով ամրագրված նորմերի այնպիսի որոշակիությունն է, որը տարընթերցման, տարընկալման և տարբեր կերպ մեկնաբանելու հնարավորություն չի տա:

«Պետական լեզվաքաղաքականություն», «գործավարություն», «ցուցանակ» հասկացությունների ոչ լիարժեք սահմանված լինելը և «լեզվավիճակի ուսումնասիրություն», «լեզվավիճակի մշտադիտարկում», «լեզվական փորձաքննություն», «փաստաթուղթ», «պետական լեզվական վերահսկողություն», «ձևաթուղթ», «զուգակցել օտար լեզվով» հասկացությունները սահմանված չլինելը խոչընդոտում են «Լեզվի մասին» ՀՀ օրենքի պահանջների ապահովմանը:

Հանրային իրավահարաբերություններում բացի ցուցանակից ու գովազդից տեղեկատվության աղբյուր են նաև ծանուցման բնույթի հրապարակային այլ գրվածքներ, մինչդեռ «Լեզվի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետով սահմանված չէ դրանք հայերեն ձևավորելու պարտականությունը և այն չկատարելու համար պատասխանատվությունը:

Ինքնապատասխանիչ սարքերով կամ տեխնիկական այլ միջոցներով քաղաքացիներին տրվող տեղեկության լեզվի պահանջը ևս սահմանված չէ օրենքով:

2.2. Ըստ «Լեզվի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետի՝ Հայաստանի Հանրապետության պետական մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկները և կազմակերպությունները, ի թիվս այլնի, պարտավոր են գովազդի բոլոր միջոցները ձևավորել հայերեն՝ անհրաժեշտության դեպքում զուգակցելով այլ լեզուներով:

Սույն նորմի հիմքով գովազդի լեզուն կարգավորող իրավահարաբերությունները նախատեսվում են «Լեզվի մասին» ՀՀ օրենքում:

2.3. Լեզվի կոմիտեն՝ որպես պետական լեզվաքաղաքականություն իրականացնող լիազորված պետական մարմին, սույն օրենքի պահանջների կատարումն ապահովում է նաև «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Լեզվի կոմիտեն սույն օրենքով նախատեսված ստուգումներ չի կարողանում կատարել, քանի որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով չեն հաստատվել ստուգաթերթերը և ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը:

2.4. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելը բխում է ««Լեզվի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի տրամաբանությունից:

3. ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԸ, ԱՆՁԻՆՔ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը լեզվի կոմիտե:

4. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Կապահովվի իրավական որոշակիության սկզբունքը, օրենքի միատեսակ կիրառումը, չի խախտվի օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը:

Օրենքին համապատասխան կմեկնաբանվի և կկիրառվի «Լեզվի մասին» ՀՀ օրենքում նախատեսված հասկացությունները, կվերանան այդ հասկացությունների տարաբնույթ մեկնաբանությունները:

Դատական պրակտիկան միևնույն փաստական հանգամանքներով գործերով կլինի միատեսակ, որը կնպաստի իրավախախտումների կանխարգելմանն ու նվազմանը:

Նախագծով հստակեցվում է նաև մյուս պետական մարմինների պետական լեզվաքաղաքականություն իրականացնելու օրենքով սահմանված լիազորությունը:

5. ԿԱՊԸ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԵՏ

Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026 թթ. ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ»:

««Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների ընդունումը բխում է «Կառավարության 2021-2026 թթ. ծրագրի» 5-րդ «Պետական կառավարման համակարգի ինստիտուցիոնալ արդիականացում» կետի 5.1 «Ձևավորված են իստիտուցիոնալ կարողություններ պետական կառավարման գործառութային (ֆունկցիոնալ) և ինստիտուցիոնալ արդիականացման օրակարգը մշակելու և իրականացնելու համար» ենթակետի պահանջներից և «Հայաստանի մինչև 2050 թվականի վերափոխման ռազմավարության»

«Մեր ազգային արժեքները» գլխի 3-րդ, «Մեր ազգային նպատակները» գլխի 6-րդ կետերից:

Առաջարկվող փոփոխություններով հստակվում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների՝ պետական լեզվաքաղաքականության վերահսկողության գործառույթն իրականացնելու յուրաքանչյուրի սահմանները, հստկեցվում են նաև պատասխանատվության մեխանիզմները: Այդ կերպ, առաջարկող նախագծով փոփոխվում են լեզվական վերահսկողության ինստիտուցիոնալ մեխանիզմները՝ ձևավորելով այնպիսի ինստիտուցիոնալ կարողություններ, որոնք համահունչ են լինելու պետական կառավարման համակարգի արդիականացման պահանջներին:

Ըստ «Հայաստանի մինչև 2050 թվականի վերափոխման ռազմավարության» «Մեր ազգային արժեքները» գլխի 3-րդ կետի՝ հայոց լեզուն և գրերը, հայ գրականությունը, ներառյալ թարգմանական գրականությունը, գիտելիքը, գիտությունը սահմանված են որպես ազգային արժեքներ, իսկ ըստ «Մեր ազգային նպատակները» գլխի 6-րդ կետի՝ հայ ժողովրդի ազգային-պետական ինքնության, ինքնուրույնության և ինքնիշխանության պահպանումն ու զարգացումը, ներառյալ ազգային ինքնության վերականգնումը և զարգացումը ռազմավարական նպատակներ են, որոնք հնարավոր է իրականացնել հայության շրջանում հայոց լեզվի իմացության մակարդակի բարձրացմամբ:

Ռազմավարական այս նպատակների իրականացումը հնարավոր է զարգացող լեզվական միջավայրում ձևավորվող իրավահարաբերությունների, պետական ու հանրային կյանքի նորահայտ երևույթների սահմանմամբ ու կարգավորմամբ, հայերենի՝ որպես Հայաստանի Հանրապետության պետական լեզվի՝ պետության կյանքի բոլոր ոլորտներում գործառության, լեզվական անվտանգության, օրենքի միատեսակ կիրառման ապահովմամբ, ինչպես նաև լեզվական մարտահրավերների չեզոքացմամբ:

6. Նախագծերի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության առկայության կամ բացակայության մասին

««Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» նախագծի ընդունման կապակցությամբ նախատեսվում է ընդունել «Հրապարակային գրվածքների (ցուցանակ, գովազդ, ծանուցման բնույթի այլ հրապարակային գրվածք) լեզվական ձևավորման կարգը» ՀՀ Կառավարության որոշում:

7. Նախագծերի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեում եկամուտների էական ավելացման կամ նվազեցման մասին

Նախագծի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեում եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում: